Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2018-2020 թթ. սովորել է Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապատրաստվել է աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

ORCID 0000-0003-2226-6435

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՑՎԱԾ ԵՎ ՀԱՄԱԼՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԸ (GSP+) ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

DOI: 10.52174/2579-2989_2022.1-52

Հիմնաբառեր. *արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ (GSP+), արտոնություն, մաքսատուրք, ապրանք, մրցունակություն*

Հոդվածում քննարկվել են «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի (GSP+)» շրջանակներում ՀՀ-ից դեպի ԵՄ ապրանքների արտահանման գործընթացը, GSP+ շահառու դառնալու նախապայմանները, 2022 թ. հունվարից արտոնություններից զրկվելու հիմքերը և դրա հետևանքները: Արտոնությունների դադարումը հիմնականում կազդի ալյումինի փայլաթիթեղի, տրիկոտաժե հագուստի պարագաների, ֆերոմոլիբդենի, ֆերմենտացված խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների արտահանման վրա: GSP+ արտոնություններից զրկվելը կհանգեցնի դեպի ԵՄ արտահանման ծավալների կրճատմանը՝ տվյալ ապրանքախմբի գծով կիրառվող նոր մաքսատուրքերի և ԵՄ շուկայում այդ ապրանքատեսակի գնային էլաստիկության չափով: Այն ապրանքները, որոնք արտահանվում են ԵՄ, որակական առումով մրցունակ են, իսկ գնային տեսանկյունից, մրցունակության անկումը հնարավոր կլինի մեղմել ծախսերի տնտեսման և արտադրողականության աճի հաշվին:

Արտահանումը կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր երկրի տնտեսության համար: Ուստի կառավարությունների միջև դիվանագիտության և արտաքին քաղաքականության հիմնական գործառույթներից մեկն առևտրի խթանումն է՝ ի շահ բոլոր առևտրային կողմերի: Միաժամանակ, յուրաքանչյուր երկիր ձգտում է իր ապրանքների համար առավել անխոչընդոտ մուտք ապահովել դեպի այլ երկրների շուկաներ: Հենց այդ նպատակով էլ կնքվում են ազատ առևտրային համաձայնագրեր, ձևավորվում ինտեգրացիոն

միավորումներ և փոխադարձաբար կամ միակողմանիորեն գործում առևտրի արտոնյալ ռեժիմներ:

ԵՄ-ն Հայաստանին՝ որպես զարգացող երկրի միակողմանիորեն տրամադրել էր արտոնյալ առևտրային պայմաններ, որի արդյունքում 2014-2020 թթ.-ին ՀՀ-ին հնարավորություն էր տրվել հայկական ծագման շուրջ 6200 ապրանք արտահանելու ԵՄ՝ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի» (GSP+) ներքո, զրոյական կամ նվազեցված մաքսատուրքով[1]: Սակայն, 2022 թ. հունվարի 1-ին Հայաստանը զրկվել է GSP+-ի շրջանակներում դեպի ԵՄ ապրանքներ արտահանելու արտոնությունից, քանի որ, ըստ Համաշխարհային բանկի դասակարգման, 2017-2019 թթ.-ին՝ 3 տարի անընդմեջ, հայտնվել է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների խմբում: 2020 թ.-ին, երբ Համաշխարհային բանկը հրապարակեց երկրների՝ ըստ եկամուտների 2019 թ.-ի դասակարգումը, և Հայաստանը դարձյալ հայտնվեց միջինից բարձր եկամտով երկրների խմբում, վերջինիս, որպես անցումային ժամանակահատված, տրվեց մեկ տարի (2021 թ.), որպեսզի տեղական տնտեսավարողները կարողանան պատրաստվել արտոնություններից զրկվելուն: Հայաստանը սկսել է օգտվել GSP+ արտոնություններից 2009 թ.-ից, որի համար հիմք են հանդիսացել մարդու և աշխատանքային իրավունքների, բնության պահպանության և արդյունավետ կառավարման վերաբերյալ ՀՀ-ի կողմից 27 միջազգային համաձայնագրերի իրականացման ընթացքը (կայուն զարգացման չափանիշ) և խոցելիության չափանիշներին համապատասխանությունը: Վերջինս ներառում է 3 չափանիշ. առաջին՝ Համաշխարհային բանկի կողմից երկիրը պետք է դասակարգված լինի որպես միջինից ցածր եկամուտ ունեցող, երկրորդ՝ GSP+ շահառու երկրից GSP+ ծածկույթի ներքո ԵՄ ներմուծման 3 տարվա միջինը չպետք է գերազանցի GSP+ շահառու բոլոր երկրներից ներմուծման 6.5%-ը, երրորդ՝ տվյալ երկրից GSP+ ծածկույթի ներքո ԵՄ ներմուծման 75%-ը պետք է կենտրոնացած լինի GSP+ ծածկույթի ընդամենը 7 խոշոր ապրանքախմբերում[2], այսինքն՝ արտահանումը պետք է լինի ոչ բազմազանեցված: Բացի ՀՀ-ից, ԵՄ GSP+ շահառու են Ղրղզստանը, Ուզբեկստանը, Պակիստանը, Մոնղոլիան, Շրի Լանկան, Բոլիվիան և Կաբո Վերդեն: Ընդհանուր առմամբ, GSP արտոնություններ տրամադրում են և՛ ԵՄ-ն, և՛ շատ այլ զարգացած երկրներ, օրինակ՝ ԱՄՆ-ն, Կանադան, Շվեյցարիան, Նորվեգիան և այլն: Զարգացած երկրների կողմից զարգացող որոշ երկրներից ծագող ապրանքներին միակողմանիորեն տրվող արտոնությունները հիմնվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության





ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Հիմնական գործընկեր երկրների տեսակարար կշիռը ՀՀ արտահանման մեջ, 2019-2020 թթ., %[3]

[1] ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, https://www.mineconomy.am/page/790
[2] The EU's Generalised Scheme of Preferences (GSP), https://trade.ec.europa.eu/doclib/docs/2015/august/tradoc_153732.pdf
[3] Կազմվել է ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա, https://www.armstat.am/file/doc/99526913.pdf



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ԵՄ ներմուծումը ՀՀ-ից, 2017-2019 թթ., *մլն եվրո*[4]



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

ՀՀ-ից արտահանումը դեպի ԵՄ, 2014-2020 թթ. , *մլն եվրո*[5]

(ԱՀԿ) Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի (GATT) դրույթների վրա[6]:

ԵՄ-ն ՀՀ-ի համար խոշոր առևտրային գործընկեր է, որին 2020 թ.-ին բաժին է ընկել ՀՀ արտահանման շուրջ 17%-ը, իսկ մինչճգնաժամային 2019 թ.-ին՝ 22%-ը (գծապատկեր 1):

ԵՄ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2019 թ.-ին ՀՀ-ից ներմուծումը կազմել է 406 մլն եվրո[7], GSP վիճակագրության համաձայն՝ 335.7 մլն եվրո, որի գերակշիռ մասը՝ 59%-ը, ներմուծվել է GSP+ արտոնությունների շրջանակում: Հատկապես 2019 թ.-ին Հայաստանը բավական արդյունավետ կերպով է օգտագործել GSP+-ի արտոնությունները՝ ապահովելով 97.9% օգտագործման մակարդակ[8]: Գծապատկեր 2-ում առավել մանրամասն ներկայացված են GSP+-ի ներքո ՀՀ-ից ներմուծման ցուցանիշները:

[4] Կազմել է հեղինակը՝ ԵՄ GSP պաշտոնական վիճակագրության հիման վրա: GSP վիճակագրությունը ներառում է միայն ԵՄ շուկա ներմուծվող, այսինքն՝ ԵՄ-ում ազատ շրջանառության համար թողարկված ապրանքները: GSP-ի վիճակագրությունը չի ներառում ԵՄ այլ ներմուծումները, ինչպիսիք են ներմուծվող ապրանքները մաքսային վերամշակման ընթացակարգի ներքո կամ վերաներմուծումը մաքսային վերամշակման ընթացակարգից հետո, https://trade.ec.europa.eu/doclib/docs/2020/february/tradoc_158640.pdf

[5] Կազմել է հեղինակը՝ ICT Trade map տվյալների հիման վրա:

[6] WTO https://www.wto.org/english/tratop_e/devel_e/dev_special_differential_provisions_e.htm

[7] Eurostat, https://ec.europa.eu/eurostat/databrowser/view/EXT_LT_MAINEU/default/table?lang=en&category=ext_go_agg.ext_go_lti.ext_go_lti_ext

[8] European Union https://trade.ec.europa.eu/doclib/docs/2020/february/tradoc_158640.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 1

GSP+ արտոնությունների ներքո ՀՀ-ից դեպի ԵՄ որոշ ապրանքախմբերի արտահանումը, 2019-2020 թթ., *մլն եվրո*[9]

	2019	2020	ԱԱՄ*[10] մաքսատուրք	GSP+ մաքսատուրք
Սև մետաղներ (ֆերոմոլիբդեն)	125.6	76.3	2.7	0
Ալյումին և դրանից իրեր	59.9	54.7	7.5	0
Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքից	67.7	54	10.5-12	0
Ֆերմենտացված ըմպելիքներ (2206)	1.2	1.3	6.8	0
Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	1.8	1.3	10-57.6	0

ՀՀ-ից արտահանումը դեպի ԵՄ հատկապես աճել է 2014 թ.-ից ի վեր (գծապատկեր 3), երբ Հայաստանը դարձել է GSP+-ի շահառու. արդյունքում, 2014 թ.-ին, 2013 թ.-ի համեմատ, արտահանումն աճել է միանգամից 21%-ով: Բացի «ավանդական» հանքանյութից, որի արտահանումը գերակշռել է թե՛ GSP+ շահառու դառնալուց առաջ, թե՛ դրանից հետո, հիմնականում ավելացել է այն ապրանքների արտահանումը, որոնք ենթակա էին այդ արտոնություններին: 2020 թ.-ին ՀՀ-ն ԵՄ է արտահանել 380.3 մլն եվրոյի ապրանք, որի շուրջ 39%-ը՝ պղնձի, ցինկի, մոլիբդենի հանքաքար և խտանյութ: Պետք է նշել, սակայն, որ այս ապրանքախումբը GSP+-ի շրջանակներում գործող արտոնություններին ենթակա չէ, ուստի, դրանց դադարեցման հետևանքով գոնե այս ապրանքախմբի արտահանման կրճատում չի սպասվում: ՀՀ-ից դեպի ԵՄ արտահանվող հիմնական ապրանքատեսակները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Հաջորդ խոշոր ապրանքախումբն ալյումինի փայլաթիթեղն է, որի արտահանումը դարձյալ բազմազանեցված չէ. 2020 թ.-ին վերջինիս 66%-ն արտահանվել է ԵՄ, 34%-ը՝ ԱՄՆ: GSP+ արտոնությունների շրջանակում ալյումինի փայլաթիթեղն արտահանվում էր զրոյական մաքսատուրքով, իսկ այժմ արդեն դրա նկատմամբ կիրառվելու է 7,5% մաքսատուրք: Հաշվի առնելով, որ 2021 թ. հոկտեմբերին ԱՄՆ-ի միջազգային առևտրի հանձնաժողովը որոշում[11] է ընդունել ՀՀ-ից և մի շարք այլ երկրներից ներմուծվող ալյումինի փայլաթիթեղի նկատմամբ հակագնագցման մաքսատուրք կիրառել, հետևաբար՝ փաստացիորեն անհնարին է դառնում ԱՄՆ-ը որպես ալյումինի փայլաթիթեղի այլընտրանքային շուկա դիտարկելը, քանի որ ՀՀ-ից ներմուծվող ալյումինի փայլաթիթեղի նկատմամբ սահմանվել է շատ ավելի բարձր՝ 29,11% հակագնացման մաքսատուրք, քան ներկայիս ԵՄ մաքսատուրքն է: Այսպիսով՝ մի կողմից ԵՄ, մյուս կողմից՝ ԱՄՆ մաքսատուրքերը բացասաբար են ազդելու ալյումինի փայլաթիթեղի արտահանման վրա:

GSP+ արտոնություններից զրկվելը բացասական անդրադարձ կունենա նաև տրիկոտաժե հագուստի պարագաների վրա: Ինչպես վերոնշյալ ապրանքախմբերի, այնպես էլ տրիկոտաժե հագուստի պարագաների դեպքում արտահանման շուկան բազմազանեցված չէ: 2020 թ.-ին նշյալ ապրանքախմբի ողջ արտահանման 66%-ը բաժին է ընկել ԵՄ-ին, 33%-ը՝ ՌԴ-ին: Նախկինում այս ապրանքախմբի մեծ մասի վրա կիրառվող զրոյական մաք-

[9] Կազմել է հեղինակը՝ ըստ ICT Trade map տվյալների, «REGULATIONS REGULATION (EU) No 978/2012 OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 25 October 2012 applying a scheme of generalised tariff preferences and repealing Council Regulation (EC) No 732/2008» IX հավելվածի, «Corrigendum to Commission Implementing Regulation (EU) 2021/1832 of 12 October 2021 amending Annex I to Council Regulation (EEC) No 2658/87 on the tariff and statistical nomenclature and on the Common Customs Tariff» փաստաթղթերի:

*[10] Ազգերի առավել բարենպաստության ռեժիմով գործող մաքսատուրք, որի ներքո այսուհետ ներմուծվելու են ՀՀ ապրանքները. այնպես, ինչպես արտոնություններից չօգտվող մյուս երկրների դեպքում է:

[11] USITC, https://www.usitc.gov/press_room/news_release/2021/er1019ll1834.htm

սատուրքի փոխարեն՝ այժմ կիրառվելու է 10.5-12% մաքսատուրք, որը նույնպես բացասական ազդեցություն է գործելու գնային մրցունակության վրա:

GSP+ արտոնությունների ենթակա հաջորդ՝ ֆերմենտացված խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների ապրանքախմբերը, որոնք թեև արտահանման արժեքով անհամեմատ փոքր են, 2014 թ.-ից մինչև 2020 թ.-ը ապահովել են արտահանման ավելի քան կրկնակի աճ: Դրանք նույնպես արտահանվել են զրոյական մաքսատուրքով, սակայն այժմ առաջինի վրա գործելու է 6.8%, երկրորդի վրա՝ 10-57.6% մաքսատուրք:

Ֆերմենտացված խմիչքների արտահանման 77%-ը 2020 թ.-ին բաժին է ընկել ՌԴ, 15%-ը՝ ԵՄ շուկային, բացի այդ, 8%-ի չափով արտահանվել է այլ երկրներ, այսինքն՝ ԵՄ-ի փոխարեն՝ այլընտրանքային շուկաների հարցում վերակողմնորոշվելու հնարավորություններն այս ապրանքատեսակի դեպքում մեծ են:

Ի տարբերություն վերոնշյալ ապրանքախմբերի, ծխախոտի արտադրատեսակների արտահանումը ոչ միայն բազմազանեցված է, այլև ԵՄ բաժինն անհամեմատ ավելի փոքր է. 2020 թ.-ին՝ ընդամենը 0.6%: Ծխախոտ առավելապես արտահանվում է Իրաք, այնուհետև Սիրիա, ՄԱԷ, ՌԴ, Վրաստան և մի շարք այլ երկրներ: Հետևաբար՝ վատագույն տարբերակում, եթե բարձր մաքսատուրքերի պատճառով ԵՄ շուկան դառնա անհասանելի, ապա դեպի այլ երկրներ վերակողմնորոշումը հնարավորություն կտա փոխհատուցելու ԵՄ չափաբաժնի կորուստը:

Այսպիսով՝ GSP+ արտոնություններից զրկվելը կհանգեցնի դեպի ԵՄ արտահանման ծավալների կրճատմանը, իսկ թե որքան՝ կախված կլինի տվյալ ապրանքախմբի համար կիրառվող նոր մաքսատուրքերից և ԵՄ շուկայում այդ ապրանքատեսակի գնային էլաստիկությունից: Berlin Economics-ի կանխատեսումներով՝ GSP+ արտոնություններից զրկվելու հետևանքով դեպի ԵՄ արտահանումը կկրճատվի 20%-ով[12], ընդ որում, կարճաժամկետ ազդեցությունն առավել մեծ կլինի ալյումինի փայլաթիթեղի, տրիկոտաժե հագուստի պարագաների և ֆերոմոլիբդենի, իսկ երկարաժամկետը՝ նոր արտահանվող ապրանքատեսակների վրա: Այն ապրանքները, որոնք արտահանվում են ԵՄ, որակական առումով մրցունակ են, իսկ գնային առումով, մրցունակության անկումը հնարավոր կլինի մեղմել ծախսերի տնտեսման և արտադրողականության աճի հաշվին: Կառավարությունը կարող է որոշակի գործիքակազմ կիրառել արտոնություններից զրկվելու հետևանքով տուժած ընկերությունների նկատմամբ՝ ընթացիկ որոշ ծախսերի սուբսիդավորման կամ արտադրողականության բարձրացման նպատակով տեխնոլոգիական վերազինման, աշխատակազմի վերապատրաստման համար:

[12] Berlin Economics, https://berlin-economics.com/en/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, https://www.mineconomy.am/page/790
2. ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա, https://www.armstat.am/file/doc/99526913.pdf
3. Berlin Economics, https://berlin-economics.com/en/
4. Corrigendum to Commission Implementing Regulation (EU) 2021/1832 of 12 October 2021 amending Annex I to Council Regulation (EEC) No 2658/87 on the tariff and statistical nomenclature and on the Common Customs Tariff.
5. Eurostat, https://ec.europa.eu/eurostat/databrowser/view/EXT_LT_MAINEU/default/table?lang=en&category=ext_go_agg.ext_go_lti.ext_go_lti_ext
6. European Union, https://trade.ec.europa.eu/doclib/docs/2020/february/tradoc_158640.pdf
7. ICT Trade map, https://www.trademap.org/Index.aspx

8. The EU's Generalised Scheme of Preferences (GSP), https://trade.ec.europa.eu/doclib/docs/2015/august/tradoc_153732.pdf
9. REGULATIONS REGULATION (EU) No 978/2012 OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 25 October 2012 applying a scheme of generalised tariff preferences and repealing Council Regulation (EC), No 732/2008, IX Annex.
10. USITC, https://www.usitc.gov/press_room/news_release/2021/er1019ll1834.htm
11. WTO, https://www.wto.org/english/tratop_e/devel_e/dev_special_differential_provisions_e.htm

Рузанна ТАДЕВОСЯН
Младший исследователь исследовательского центра «Амберд», аспирант, АГЭУ

АРМЕНИЯ И МИР

ВСЕОБЩАЯ СИСТЕМА ПРЕФЕРЕНЦИЙ ПЛЮС (GSP+) И АРМЕНИЯ

В статье рассматривается экспорт армянских товаров в ЕС в рамках «Всеобщей схемы преференций (GSP+)», предпосылки для того, чтобы стать бенефициаром ВСП+, основания для прекращения действия преференций с января 2022 года и его последствия. Прекращения преференций в основном коснется экспорта алюминиевой фольги, трикотажных изделий, ферромолибдена, ферментированных напитков и табачных изделий. Лишение привилегий GSP+ приведет к сокращению экспорта ЕС в размере новых тарифов и ценовой эластичности этого конкретного продукта на рынке ЕС. Продукция, экспортируемая в ЕС, конкурентоспособна с точки зрения качества, и снижение ценовой конкурентоспособности можно смягчить за счет экономии затрат и роста производительности.

Ключевые слова: *Всеобщая Система Преференций Плюс (GSP+), льгота, тариф, товар, конкурентоспособность*

Ruzanna TADEVOSYAN
Junior researcher at «Amberd» Research Center, PhD student, ASUE

ARMENIA AND WORLD

GENERALISED SCHEME OF PREFERENCES PLUS (GSP+) AND ARMENIA

The paper discusses the export of Armenian goods to the EU within the framework of the «Generalized Scheme of Preferences (GSP +)», the preconditions for becoming a beneficiary of GSP +, the grounds for the graduation of preferences from January 2022, and its consequences. The graduation of the preferences will mainly affect the export of aluminum foil, knitted garments, ferromolybdenum, fermented beverages and tobacco products. The deprivation of GSP + privileges will lead to exports reduction in the EU in the extent of new tariffs and the price elasticity size of that specific product in the EU market. The products that are exported to the EU are competitive in terms of quality, and the decline in price competitiveness can be mitigated by cost savings and productivity growth.

Keywords: *Generalised Scheme of Preferences Plus (GSP+), privilege, tariff, product, competitiveness*